ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Լիլիթ Պողոսյան, ՀՀ ԿԳՄՍՆ մշակութային ժառանգության վարչության մշակութային արժեքների արտահանման և ներմուծման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն, Սպրինգֆիլդ, Բոստոն, Սինսինատի, Սանտա Ֆե, Լոս Անջելես)

19 սեպտեմբերի – 10 հոկտեմբերի, 2026 թ.

3. Հրավիրող կողմը

Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատուն, ԱՄՆ Պետական դեպարտամենտ (Կրթական և մշակութային գործերի բյուրո, Միջազգային այցելուների առաջնորդության ծրագիր (IVLP))

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

«Մենք ենք ժողովուրդը. մշակութային ժառանգության պահպանումն ու տոնակատարությունը» թեմայով Միջազգային Այցելու ծրագրին (International Visitors Leadership Program) մասնակցության հիմնական նպատակներն էին՝

- Մշակութային ժառանգության պահպանման, քաղաքականության մշակման և միջգերատեսչական համագործակցության առաջատար փորձի ուսումնասիրությունը,
- Համայնքային ներգրավվածության, կրթական ծրագրերի և իրազեկման նորարարական մոդելների ուսումնասիրումը,
- Մշակութային ժառանգության ոչնչացման և ապօրինի շրջանառության կանխարգելման ռազմավարությունների քննարկումը,

- ԱՄՆ օրենսդրության և իրավապահ մեխանիզմների հետ ծանոթացումը՝ մշակութային արժեքների ապօրինի ներմուծումն ու արտահանումը կանխելու նպատակով,
- Գործընկերային կապերի հաստատումը ԱՄՆ թանգարանների, ակադեմիական հաստատությունների և իրավապահ մարմինների հետ:

5. Քննարկված թեմաները

Վաշինգտոն. Մշակութային քաղաքականության պետական մոդելները, հավաքածուների կառավարումն ու թվային պահպանությունը

Վաշինգտոնում ուսումնասիրվել են մշակութային ժառանգության պահպանության ոլորտում դաշնային քաղաքականության մշակման, միջգերատեսչական համակարգման և ռազմավարական ֆինանսավորման ինստիտուցիոնալ մեխանիզմները: Քննարկվել են թանգարանային առարկաների և արխիվային ֆոնդերի թվայնացման ժամանակակից ստանդարտները, բազմասպեկտրալ նկարահանման (multispectral imaging) տեխնոլոգիաները, ինչպես նաև թվային տվյալների երկարաժամկետ անվտանգության ու հանրային հասանելիության ապահովման տեսական-մեթոդաբանական մոտեցումները:

Սպրինգֆիլդ և Բոստոն. Մշակութային ժառանգություն, լեզվական ու էթնիկ պահպանություն և ազգային հիշողության համակարգեր

Այս քաղաքներում ներկայացվել են պատմական տուն-թանգարանների պահպանության տեսական սկզբունքները, հանրային կրթական ծրագրերի մշակումը և բուհական համակարգի հետ ակադեմիական փոխգործակցության մոդելները: Հատուկ ուշադրություն է դարձվել անհետացման վտանգի տակ գտնվող լեզվական ու գրական ժառանգության (Իդիշ լեզվի օրինակով) թվայնացման հայեցակարգերին, ինչպես նաև էթնիկ համայնքների (լեհական համայնք) նյութական ու ոչ նյութական ժառանգության պահպանման մեթոդաբանությանը: Միաժամանակ, ԱՄՆ Անկախության 250-ամյակի օրինակով դիտարկվել են ազգային հիշողության կազմակերպման, պատմական

իրադարձությունների համակարգման և խոշոր հոբելյանական միջոցառումների ռազմավարական պլանավորման հայեցակարգերը:

Սինսինատի. Իրավական համապատասխանություն, ծագումնաբանություն և տարածքային վերազարթոնք

Սինսինատիում քննարկվել են թանգարանային հավաքածուների իրավական ապահովման տեսական հիմքերը, ծագման պատմության ընթացակարգերը և միջազգային ու ֆեդերալ օրենսդրությանը համապատասխանեցման ինստիտուցիոնալ մոդելները: Վերլուծության են ենթարկվել պատմական թաղամասերի (Over-the-Rhine) և արդյունաբերական լանդշաֆտների վերազարթոնքի հայեցակարգերը, որտեղ պատմամշակութային միջավայրի ադապտիվ վերաօգտագործումը դիտարկվում է որպես տնտեսական զարգացման և քաղաքային միջավայրի արդիականացման հիմնական պատճառ:

Սանտա Ֆե. Համայնքային կառավարում, տեղաբնիկների իրավունքներ և մշակութային տնտեսականացում

Սանտա Ֆեում ուսումնասիրվել են մշակութային տնտեսականացման տեսական մոդելները, այդ թվում՝ ժողովրդական արհեստների միջազգային շուկայի (International Folk Art Market) և թանգարանային համալիրների (Museum Hill) կառավարումը՝ որպես համայնքային տնտեսական զարգացման և մշակութային զբոսաշրջության խթան:

Վերլուծվել են պետություն, մասնավոր և համայնքային գործընկերության հայեցակարգերը, հնագիտական լանդշաֆտների պահպանությունը, ինչպես նաև տեղաբնիկ ժողովուրդների (Pueblo) ինքնավար մարմինների և պետական իշխանության համագործակցության տեսական ու իրավական հիմքերը:

Լոս Անջելես. Իրավապահ մեխանիզմներ, լաբորատոր փորձաքննություն և ռեսուրսների գույքագրում

Լոս Անջելեսում դիտարկվել են բեռնափոխադրումների անվտանգության, մատակարարման շղթաներում հանցագործությունների կանխման և իրավապահ

մարմինների (LASD Cargo CATs) կողմից մշակութային արժեքների ապօրինի շրջանառության դեմ պայքարի տեսական-օպերատիվ մոդելները: Ուսումնասիրվել են Լոս Անջելեսի շրջանի արվեստի թանգարանի (LACMA) վերականգնողական կենտրոնի օրինակով թանգարանային առարկաների գիտալաբորատոր քննության (նյութագիտական վերլուծություն) տեսությունը, ինչպես նաև «Սանտա Մոնիկա պատմական ժառանգության պահպանության» (Santa Monica Conservancy) կազմակերպություն տեղական պատմական ռեսուրսների համակարգված գույքագրման (Historic Resources Inventory) մեթոդաբանությունը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Վաշինգտոն (սեպտեմբերի 19–24)

Վաշինգտոնում տեղի է ունեցել հանդիպում ԱՄՆ Պետական դեպարտամենտի Մշակութային ժառանգության կենտրոնի ներկայացուցիչների հետ (Cultural Heritage Center), որտեղ քննարկվել են մշակութային արժեքների ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային համաձայնագրերն ու իրավական մեխանիզմները: Կոնգրեսի գրադարանում հանդիպում է կայացել պահպանության և թվայնացման բաժինների ղեկավարների հետ, որի ընթացքում ներկայացվել են հավաքածուների պահպանման և թվայնացման ռազմավարությունները: Ազգային արխիվում կազմակերպվել է այցելություն պահպանության լաբորատորիա, որտեղ քննարկվել են արխիվային ծառայությունների թվայնացման և վերականգնման ժամանակակից մեթոդները: Սմիթսոնյան ինստիտուտի (Smithsonian Institution) Ասիական արվեստի ազգային թանգարանում հանդիպում է տեղի ունեցել թանգարանի պահպանության ինստիտուտի մասնագետների հետ՝ թանգարանային առարկաների պահպանության թեմայով:

Սպրինգֆիլդ և Բոստոն (սեպտեմբերի 24–29)

Ամհերսթում գտնվող Իդիշ գրքի կետնրոնում հանդիպում է տեղի ունեցել տնօրենի հետ, որի ընթացքում քննարկվել են իդիշ գրականության պահպանման և գրքերի թվայնացման ծրագրերը: Էմիլի Դիքենսոնի թանգարանում հանդիպում է անցկացվել գործադիր տնօրեն հետ՝ պատմական տների վերականգնման և բուհերի հետ

համագործակցության թեմայով: Սփրինգֆիլդ քաղաքի Մեծ Ի (The Big E!) կենտրոնում հանդիպում է կայացել տնօրինության հետ՝ ԱՄՆ 6 նահանգների մշակութային ժառանգության տոնակատարման և հանրայնացման շուրջ: Չիկոպիի լեհական կենտրոնում տնօրենի հետ քննարկվել են համայնքային ներգրավվածությամբ լեհական մշակութային ժառանգության պահպանման հարցերը: Բոստոնում ծանոթացել ենք «Freedom Trail» պատմական քայլարշավային երթուղուն և դրա կառավարման փորձին:

Սինսինատի (սեպտեմբերի 29 – հոկտեմբերի 2)

Սինսինատիում մասնակցել եմ Օհայոյի ժառանգության նահանգային տարեկան համաժողովի բացմանն ու թեմատիկ աշխատաժողովներին: «Հռենոսից այն կողմ» (Over-the-Rhine) պատմական թաղամասում և Ֆինդլեյ շուկայի և «Հռենոսից այն կողմ» թանգարանի տնօրենի հետ ուսումնասիրվել է պատմական ճարտարապետության ադապտիվ վերաօգտագործման փորձը: Սինսինատիի արվեստի թանգարանում հանդիպում է տեղի ունեցել Մշակութային գույքի հանձնախմբի հետ՝ հավաքածուների ծագման աուդիտի և իրավական համապատասխանության շուրջ: «Սինսինատիի պատմական ժառանգության պահպանության ասոցիացիայի» հետ Ջոն Հաուկի պատմական տանը քննարկվել են պետական-մասնավոր գործընկերության մոդելները:

Սանտա Ֆե (հոկտեմբերի 2–7)

«Բանդելիեր ազգային հուշարձանում» ուսումնասիրվել են հնագիտական վայրերի պահպանության և գողության կանխարգելման մեխանիզմները: Սանտա Կլարա Պուեբլոյում հանդիպում է կայացել տեղաբնիկների առաջնորդների հետ՝ քննարկելով տեղական (Pueblo) ոստիկանության և անտառային ծառայության համագործակցությունը սրբավայրերի պաշտպանության գործում:

«Ժողովրդական արհեստների միջազգային շուկա» (IFAM) կազմակերպության հետ քննարկվել են ժողովրդական վարպետների համար տնտեսական հնարավորությունների ստեղծման հարցերը: Նյու Մեքսիկոյի հնագիտության կենտրոնում անցկացվել է շրջայց ավելի քան 10 միլիոն հնագիտական առարկաներ պահպանվող ֆոնդերում և հանդիպում տեղում աշխատող մասնագետների հետ:

Թանգարանային բարձունքում (MIAC, MOIFA, Wheelwright Museum) մասնակցել եմ թանգարանների տնօրենների պանելային քննարկմանը:

Լոս Անջելես (հոկտեմբերի 7-10)

«Ամերիկյան արևմուտքի Օթրի թանգարանի» հետազոտական կենտրոնում քննարկվել են Ամերիկյան Արևմուտքի պատմական ժառանգության պահպանության հարցերը: Լոս Անջելեսի շրջանի շերիֆի դեպարտամենտում (LASD) հանդիպում է տեղի ունեցել քննիչի հետ գողացված մշակութային արժեքների հայտնաբերման թեմայով: «Սանտա Մոնիկայի պատմական ժառանգության պահպանության կազմակերպությունում» հիմնադրի հետ քննարկվել է «Պատմական ռեսուրսների գույքագրման» տվյալների բազայի կիրառումը:

Լոս Անջելեսի շրջանի արվեստի թանգարանում (LACMA) հանդիպման ընթացքում ներկայացվել են մշակութային առարկաների ծագման հետազոտության և պահպանության լաբորատոր մեթոդները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Մշակութային ժառանգության պահպանության ոլորտի արդիականացում, միջազգային չափանիշներին համապատասխանեցում և ապօրինի շրջանառության դեմ պայքարի մեխանիզմների ընդլայնում:

8. Ստորագրությունը, ամսաթիվը

Լիլիթ Պողոսյան

13 հոկտեմբերի 2026 թ.